

ցաւ, և փեսան ալ տեսաւ, որ զուարթութեան մէջ էր և մոռցած կը տեսնուէր Չեչեններուն անգթութիւններն : “Ինզրեմ ցուցուր ինծի, ըսաւ ստորին պաշտօնատարին, այն քաջասիրտ ծառան որ զինքը ազատեց : ” Ի՞ն ալքիչ մը ատեն վարանելէն ետքը “Ես եմ, պատասխանեց : Ի՞ն դիպուածէս յանկարծակիի գալով ձամքորդը և զանիկայ այնչափ երիտասարդ տեսնելով, տարիքը հարցուց : Ի՞ն քսաններորդ տարին չէր լմնցուցած և իր ցուցուցած քաջասրտութեանը և հաւատարմութեանը փոխարէն պատուանշան մը և ստորին պաշտօնակալութեան աստիճանը ընդունած էր : Ի՞ն քաջասիրտ երիտասարդը կամաւորապէս իր տիրոջը վշտակից ըլլալէն և անոր կեանք և ազատութիւն տալէն ետքը, անոր բարեբախտութեանը վրայ կ'ուրախանար, հարսանիքը ապակիներուն ետեւէն դիտելով : Ի՞նյց որովհետեւ ձամբորդը սկսաւ զարմանք մը ցուցնել անոր հարսանեաց մէջ ըստնուելուն, որով կը պարսաւէր իր նախկին տիրոջ ապերախտութիւնը, իւան ծուռ մը նայեցաւ անոր, ու տան մէջ մտաւ հայ լիւլի, հայ լիւլի եղանակը սուլէլով : Վիչ մը ետքը պարահանդիս սրահին սրահին մէջը տեսնուեցաւ . և այն հետաքրքիր ձամբորդը նորէն իր կառքը մտաւ ու ձամբայ ելաւ, մեծապէս ուրախանալով, որ ինքն ալ իր գըլիսուն կացինի հարուած չընդունեցաւ :

ԳՍԱՎԻՑ ՏԸՄԴՐԸ

Երկարակեաց լնտանիք մը :

Ի՞նցեաները Պիելոպոնեսի Անտինէա գաւառին Տեղէա քաղաքին մէջ Յովհաննէս Պիոսինիդիս անուամբ երկրագործ մը 113 տարուան մեռեր է՝ առանց կորսընցունելու աչաց, լելեաց և մաքին կարողութիւններն : Ի՞ն կը :

տրիչ ալևորս ամենաթեթև հիւանդութիւն մ'այլչէր կրած, միայն 1812 էն սկսեալ աղէթափութեան հիւանդութեամբ կը նեղուէր : Ինսական ոյժն իր առջի տեղն էր, և քաջ պատանւոյ մը նման կը քալչէր ու կ'աշխատէր : Ի՞ն իսկ մեռնելու օրը լաւ կ'որոշէր պարզ աշաց տեսութեամբ կէս մղոն հեռուն մարդ մը, և այն հեռաւորութեան եռապատիկը՝ երկուք ալ եշ որ իր գաշտաց մէկուն մէջի ցանած խոտերը բարձեր կը կրէին : Ա ախճանելէն երկու ժամ առաջ իմացուցէր էր իր ամուսնոյն, որ գեռ ողջ էր ու 95 տարւան, թէ մահուան մօտենալն ու վրան համնիլը սկսեր էր զգալու : Իդիկունը մէկ տեղ հաւաքելով իր գործաւորները, լաւ մը կերաւ ու խմեց անոնց հետ և յետ ապսպըրելու անոնց ուրախութեամբ անցունելու այն գիշերը, ինքը քիչ մը հանգչելու համար իր սենեակը քաշուեցաւ : Ո՞ինչ աշխատաւորները կը զուարձանային վարն ու ուրախ զուարթէ երգէին, ինքը դէս ՚ի արևելք դառնալով, առանց իսկ իմանալու այս ըրածշարժմունքը, և ձեռքերը խաչածե սըրտին վրայ կնքելէն վերջը՝ աւանդեց հոգին, այն ինչ ծառայք դեռ շարունակելու հետ էին իրենց աշխոյժ երգերը, մոքերնէն անցունելով որ ծերը գեռ կը քնանայ, իրենց ներգաշնակ գոչումները անոր նէննի տեղ բռնելով, և այս կարծիքը ժամէ մ'աւելի տեսեց : Յարգելի նահապետս իր մէկ կարգուելովը 12 մանչ և երկուք ալ աղջիկ զաւակ ունեցաւ, որոնցմէ 36 թոռունք մանչ և աղջիկ ծնան, որ 88 անգամ ջոջ պապը ըրին զինքը, և անոնց զաւկըներն ալ երկու անգամեռապապ, որ բոլորը մէկէն 132 սերունդ կ'ըլլայ : Յուղարկաւորութեան հանդէսին գնացին իրեն հինգորդիքը որք դեռ կ'ապրէին, 36 թոռները, 80 թոռանց որդիքն, և այս վերջիններուս տղաքն ալ : Եւ ամենքը կարգաւ տուին իրենց յետին համբոյրը վախճանած հօրը, պապուն, ջոջ պապուն, և եռապապուն ձեռացը, բաց ՚ի մէկ որդւոյն որ նոյն ատեն հոն չէր :

Ղ.յս 113 ամեան ծերոյս մայրն իրմէն
ինը տարի յառաջ գերեզման մտեր էր
122 տարուան :

Ամերիկացի լնտանիք մը :

Դանդեան գիշերն էր, գերմանացի
հին գաղթականներէն ընտանիք մը,
որոնք որդւոց որդի յաջորդելով, Իւն-
սիլվանիայի անտառներուն մէջ կը բը-
նակէին, նահապետական տան մը մէջ՝
վառարանի մը բոլորտիքը ժողուած,
թեթև ընթրէք մը կ'ընէին : Ուղա-
նին վրայ զրուած ձերմակ գինւոյ շիշերն
Հուենոսի գինեւէտ ափունքը կը յիշեցը-
նէին : Խրակարանին վերև հայիի փայ-
տէ պղտի շրջանակ մը՝ մէկդին տօ-
սախի ձիւղ մը, մէկալ դին որսի հրա-
ցան մը . շրջանակին մէջն ալ հաս-
տատուած էր մետաքսէ կապոյտ են-
թակայի մը վրայ խարտեաշ խոպոպի
փունջ մը : Ղ.յս ժամն գորովանաց և
յիշատակի ժամմ' էր Վրիստոսի ծը-
նունդը կ'երգէին, և մանուկ Հիսուսին
վրայ կը խօսակցէին . շատ վայելուչ
էին այս վայրկենիս այն խարտեաշ մա-
զերն : “ Ղոյնպէս ես ալ խարտեաշ
էի, ըսաւ ընտանեաց նահապետը . տե-
սէք այս գեղեցիկ խոպոպիքները, ա-
սոնցմով ատենօք այս ալւորեալ զլուխը
զարդարուած էր՝ ուր հիմա հաղիւ քա-
նի մը արծաթի թելեր կ'երևան : Հին
պատմութիւն մ' է ասիկայ, որ առանց
արցունքով ծնօտը թրծելու, չէր պատ-
մեր հայրս : Ո՞տիկ ըրէք որդեակը, կա-
րելի է որ չկարենամ ասկէ ետե երգել
ձեզի չետ Վրիստոսի ծնունդը, և այն
ատեն այս պատմութիւնս ձեր սիրտը
շարժէ :

“ Ըստ տարուան էի, մազերս ալ
խարտեաշ և երկայն, որսնք թէ քա-
միէ, թէ անձրեսի ատեն և թէ արեւու՝
միշտ հովուն կը ծածանէին : Հայրս որ
ամէն որ զիս հետը կը տանէր, որ մ'ալ

անտառը տարաւ փայտ կտրելու հա-
մար : Խոշոր կացին մը ունէր, որուն
ամէն մէկ հարուածովը ամէն կողմանէ
կայծեր կը յատքեցնէր : Խոնչպէս եղաւ
շեմգիտեր, ձիւղ մը ինկաւ ոտիցս քով
որուն վրայ թռչունի բոյն մը կար, հա-
զիւ ծռեցայ որ առնում, սահեցաւ
ոտքս, և զլուխս եկաւ մեծ կոճղին
վրայ՝ ուր հայրս ձիւղերը կը զարնէր.
և նոյն միջոցին հայրս կացինը բարձրա-
ցուցած ըլլալով, չկրցաւ մէկէն կեցնել.
ես ալ տառապանաց աղաղակ մ'էր ար-
ձակեցի, ուսկից հայրս խելքը կորսըն-
ցուցած գետինն ինկաւ : Ի՞այց շու-
տով զգաստացանք, ինքն իր վախէն
ես ալ գլխուս ցաւէն : Ո՞էկէն առաւ
զիս բազկացը մէջ և ոտուըներէս մինչեւ
գլուխս շօշափեց, կարծելով որ մեռած
եմ : Ի՞այց երբոր տեսաւ որ շրթանցս
մէջէն պղտիկ մը կը ժպտէի, և մար-
մնոյս վրայ և ոչ իսկ արեան կաթիլմը
կը տեսնուեր, ծնկան վրայ ընկաւ, և
արտասուաց կաթիլներով գոհութիւն
տուաւ Ղստուծոյ : Ո՞տք ելաւ և կրկին
անգամ կացինը ձեռք առնելու ժամա-
նակ, կոճեղ վրայ հոծ և երկայն խար-
տեաշ խոպոպիք մը դտաւ . առաւ զայն,
զիս ալ գրկեց, և խենթի պէս վազելով
մինչեւ խրձիթ բերաւ զիս, և մօրս ծըն-
կուըներուն վրայ հանգչեցուց : Ղհա-
ւասիկ որդեակը խոպոպիքներուն պատ-
մութիւնը, հայրս ուզեց որ միշտ վա-
ռարանին վրայ կենայ, որպէս զի բնաւ
չմունայ իր ընտանիքը՝ Ղստուծոյ նա-
խախնամութեան բարիքը :

